Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 520 - Ա
որոշման

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԹԻՄԻՆ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Արտակարգ իրավիճակների ժամանակ՝ միջազգային մարդասիրական առաքելությունների շրջանակներում, տուժածներին բժշկական օգնություն տրամադրելու նպատակով ստեղծվող Հայաստանյան արագ արձագանքման բժշկական թիմի ինքնաբավ լինելու, ցանկացած վայրում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, տեղակայվելու և տուժած քաղաքացիներին անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելու համար նյութատեխնիկական ապահովում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Եվրամիության Եվրոպական քաղաքացիական պաշտպանության և հումանիտար օգնության գործառնությունների գլխավոր տնօրինություն (Directorate-General for European Civil Protection and Humanitarian Aid Operations):
4.	Ծրագիրը կատարողը	Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Արբեիտեռ-սամարիտեռ-բունդ Դոյչլանդ ի Վի (ԷյԷսԲի)»-ի մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանում (Երևան, Աբովյան փողոց 16, 202 սենյակ, ՀՎՀՀ՝ 02870545)

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, արտակարգ իրավիճակներ
6.	Ծրագրի բյուջեն	6,963,934 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանյան արագ արձագանքման բժշկական թիմը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության: Հայաստանյան արագ արձագանքման բժշկական թիմի աշխատանքները համակարգելու է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը: Թիմը համալրվելու է Առողջապահության նախարարության, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի և Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության մասնագետներով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանյան արագ արձագանքման բժշկական թիմի նյութատեխնիկական ապահովում՝ 6,963,934 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2026 թվականի փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) նյութատեխնիկական ապահովման ապրանքներ՝ սարքավորումների, գործիքների, էլեկտրական շինարարական գործիքների ձեռքբերում՝ 3,821,100.27 դրամ արժողությամբ առանց ավելացված արժեքի հարկի. 2) ճանապարհորդական պարագաներ՝ քնապարկեր, ուսապարկեր և քնապարկի ներքնակների ձեռքբերում՝ 3,142,833 դրամ արժողությամբ, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ